



ԱՐՄԵՆԻԱ
ԻՆՇՈՒՐԱՆՍ

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ»
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍԴԸ խորհրդի
«07» փետրվարի 2025թ. թիվ 17 որոշմամբ

**ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ
ՎՆԱՍՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

ք.Երևան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	3
ԲԱԺԻՆ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏ.....	5
ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՅՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ	5
ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ՊԱՏԱԽՍԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆ.....	8
ԲԱԺԻՆ 5. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ (ՖՐԱՆՇԻԶԱ)	8
ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱԿԱԳԻՆ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ	9
ԲԱԺԻՆ 7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄ	9
ԲԱԺԻՆ 8. ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ.....	11
ԲԱԺԻՆ 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՆՇԱՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՊԱՏԱՀԱՐԻ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ	11
ԲԱԺԻՆ 10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳ.....	13
ԲԱԺԻՆ 11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՈՐՈՇՈՒՄ	16
ԲԱԺԻՆ 12. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ.....	18
ԲԱԺԻՆ 13. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ.....	20
ԲԱԺԻՆ 14. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ	20

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն «Երրորդ անձանց պատճառված վնասների քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության կանոնները» (այսուհետ՝ Կանոններ), մշակված են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն և պարունակում են պայմաններ, որոնց հիման վրա «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ապահովագրող), գործելով Կանոնադրությամբ, կնքում է երրորդ անձանց վնաս հասցնելու քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության պայմանագրեր և (կամ) վկայագրեր (այսուհետ՝ Պայմանագիր):

1.2. Երրորդ անձանց պատճառված վնասների քաղաքացիական պատասխանատվության ապահովագրությունը ներառվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ոչ կյանքի ապահովագրության տեսակի «Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն» դասի մեջ:

1.3. Կանոնները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը: Պայմանագիրը կարող է բովանդակել այլ պայմաններ, որոնք որոշվում են Ապահովադրի և Ապահովագրողի կամ Պայմանագրի կողմերի (այսուհետ՝ Կողմեր) փոխադարձ համաձայնությամբ, չպետք է հակասեն Կանոններին, Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին:

1.4. Պայմանագիր կնքելիս Կողմերը կարող են համաձայնության գալ Կանոնների առանձին դրույթների չկիրառման մասին, ինչպես նաև Պայմանագրում՝ Կանոնների տեքստում շարադրված դրույթներից տարբեր դրույթների կիրառման մասին, պայմանով, որ դա չհակասի օրենքին, այլ իրավական ակտերին և Կանոններին:

1.5. Ապահովագրողն իրավունք ունի Կանոնների հիման վրա կնքվող կոնկրետ Ապահովադրին ուղղված Պայմանագրի համար, Կանոնների հիման վրա ձևավորել առանձին ապահովագրության պայմաններ, պայմանով, որ դա չհակասի օրենքին, այլ իրավական ակտերին և Կանոններին: Այդպիսի պայմանները կցվում են Պայմանագրին և հանդիսանում են դրա անքակտելի մասը:

1.6. Ապահովագրողն իրավունք ունի Կանոնների հիման վրա կնքված միանման Պայմանագրերի առանձին խմբերին տալ մարքեթինգային անվանումներ, պայմանով, որ դա չհակասի օրենքին և այլ իրավական ակտերին:

1.7. Համաձայն Կանոնների որպես Ապահովադիր, այսինքն, Ապահովագրողի հետ Պայմանագիր կնքած և ապահովագրավճար վճարած անձ կարող է հանդես գալ որպես յուրաքանչյուր իրավաբանական անձ կամ գործունակ ֆիզիկական անձ:

1.8. Կանոնների հիման վրա կնքված Պայմանագրով կարող է ապահովագրվել Ապահովադրից տարբեր այլ անձի պատասխանատվությունը (այսուհետ՝ Անձ, որի պատասխանատվությունը ապահովագրված է): Անձը, ում պատասխանատվությունը ապահովագրված է, պետք է նշված լինի Պայմանագրում: Ընդ որում, Կանոնների դրույթները, որոնք վերաբերվում են Ապահովադրին, հավասարապես վերաբերվում են նաև այն անձին, որի պատասխանատվությունը ապահովագրված է:

**ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

1.9. Եթե Ապահովադրից տարբեր այլ անձ, որի պատասխանատվությունը ապահովագրված է, Պայմանագրում նշված չէ, ապա ապահովագրված է համարվում Ապահովադրի պատասխանատվության դիսկը:

1.10. Կանոնների հիման վրա կնքված Պայմանագիրը կնքվում է երրորդ անձանց՝ ֆիզիկական անձանց օգտին, որոնց կյանքին, առողջությանը կամ գույքին կարող է վնաս պատճառվել կամ իրավաբանական անձանց օգտին, որոնց գույքին կարող է վնաս պատճառվել (այսուհետ՝ Շահառու): Պայմանագիրը համարվում է կնքված Շահառուների օգտին, եթե նույնիսկ այն կնքվել է վնասի համար պատասխանատու Ապահովադրի կամ այլ անձի օգտին, կամ Պայմանագրում նշված չէ, թե ում օգտին է այն կնքված:

1.11. Կանոններում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները և արտահայտությունները՝

ա) Ապահովագրության պայմանագիր՝ Ապահովադրի և Ապահովագրողի միջև գրավոր համաձայնություն, որի հիման վրա Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրության պայմանագրով սահմանված որոշակի գումարի (ապահովագրավճարի) դիմաց Կանոններով նախատեսված և ապահովագրության պայմանագրում նշված որոշակի ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովադրին (շահառուին) վճարել ապահովագրական հատուցում երրորդ անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառված վնասի դիմաց, բայց ոչ ավել քան ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը:

բ) Ապահովագրվող գործունեություն՝ իրավական ակտերին չհակասող գործունեություն, որի իրականացման դեպքում կատարվում է Ապահովադրի կամ Պայմանագրում նշված անձի քաղաքացիական պատասխանատվության ապահովագրությունը:

Համաձայն Կանոնների, որպես ապահովագրվող գործունեություն կարող են հանդիսանալ՝

- շենքերի, շինությունների, տարածքների, սարքավորումների, հողակտորների պահպանումը և շահագործումը,
- շինություններին տիրապետումը,
- տնտեսական գործունեությունը,
- զանգվածային հասարակական միջոցառումների կազմակերպումը և անցկացումը (ցույցեր, քայլարշավներ և այլն),
- սպորտային, մշակութային և կրթական միջոցառումների անցկացումը (ավտոմրցույթներ, մրցույթների, ներկայացումների, համերգներ, ցուցահանդեսներ, շնորհանդեսներ և այլն),
- տոնական հրավառությունների, իլյումինացիաների և այլնի կազմակերպում,
- կենդանի պահելը (շներ, անասուններ, էկզոտիկ կենդանիներ և այլն),
- աշխատանքային հարաբերություններում գործատուի գործունեությունը՝ ուղղված աշխատողների համար անվտանգ աշխատանքային պայմանների ստեղծմանը,
- խնամակալների և հոգաբարձուների գործունեությունը,
- շրջապատող մարդկանց համար բարձր վտանգավորությամբ գործունեություն, որի իրականացման համար օրենքով և այլ իրավական ակտերով չի պարտադրվում հատուկ պայմաններով ապահովագրության իրականացում,
- դեղորայքի կլինիկական հետազոտությունների կազմակերպումը, իրականացումը և անցկացումը,

ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

• գործունեության այլ տեսակներ, որոնց իրականացումը կարող է վնաս պատճառել Շահառուների կյանքին, առողջությանը կամ գույքին:

Ապահովագրվող գործունեությունը պետք է նշված լինի Պայմանագրում:

Պայմանագիրը կարող է կնքված լինել առանց ապահովագրվող գործունեությունը նշված լինելու այն դեպքում, երբ Պայմանագիրը համարվում է կնքված վնաս պատճառելու հետևանքով Ապահովադրի քաղաքացիական պատասխանատվության ի հայտ գալու դեպքում:

գ) Ապահովադրի պատասխանատվության սահման՝ գումար, որը չի գերազանցում Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը, և որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է վճարել ապահովագրական հատուցում յուրաքանչյուր ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում:

դ) Ապահովագրավճար՝ ապահովագրության համար նախատեսված վճար, որն Ապահովադիրը պայմանագրի համաձայն պարտավոր է վճարել Ապահովագրողին:

ե) Ապահովագրական գումար՝ գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադրին վճարել ապահովագրական հատուցում:

զ) Ապահովագրական ռիսկ՝ որոշակի իրադարձության տեղի ունենալու հավանականություն, որի հետ կապված իրականացվում է ապահովագրությունը:

է) Ապահովագրական պատահար՝ Պայմանագրով նախատեսված տեղի ունեցած իրադարձություն, որի ի հայտ գալով առաջանում է ապահովագրական հատուցում վճարելու Ապահովագրողի պարտավորությունը:

ը) Ապահովագրական սակագին՝ սահմանված ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափ, որը որոշվում է հաշվի առնելով ապահովագրության օբյեկտը և ապահովագրական ռիսկի բնույթը:

թ) Ապահովագրության տարածք՝ տարածք, որի վրա տարածվում է Պայմանագրի գործողությունը և Պայմանագրում նշված ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում ապահովագրական հատուցում վճարելու Ապահովագրողի պարտավորությունը: Տարածք, որի սահմաններում Ապահովագրողը իրականացնում է ապահովագրական գործունեություն: Եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապահովագրության տարածք է համարվում Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքը:

ԲԱԺԻՆ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

Ապահովագրության օբյեկտ են համարվում Ապահովադրի գույքային շահերը՝ կապված Շահառուի կյանքին, առողջությանը կամ գույքին հասցված վնասը օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից հատուցելու պարտավորության հետ:

ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1. Կանոնների համաձայն ապահովագրական ռիսկ է հանդիսանում Շահառուի կյանքին, առողջությանը կամ գույքին հասցված վնասի հետևանքով Ապահովադրի քաղաքացիական պատասխանատվության ռիսկի ծագումը, որը արդյունք է՝

- ոչ կանխամտածված անզգուշության (սխալի, բացթողման),

**ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

- ապահովագրված գործունեության ընթացքում նյութերի, սարքավորումների, գործիքների և այլնի չբավականացման (չբավարարման) և նյութերին բնորոշ առանձնահատկությունների,

- ապահովագրության տարածքում գործող, իրավական ակտերով նախատեսված այլ պատճառների:

3.2. Կանոնների համաձայն ապահովագրական պատահար է համարվում օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան Շահառուի կյանքին, առողջությանը կամ գույքին հասցված վնասի հետևանքով Ապահովադրի քաղաքացիական պատասխանատվության առաջացումը (ծագումը), պայմանով, որ միաժամանակ առկա են Կանոնների 3.2.1-ից 3.2.6 ենթակետերում նշված պայմանները՝

3.2.1. Պայմանագրի գործողության ժամանակահատվածում Ապահովադրին ներկայացվել են վնասը հատուցելու Շահառուի պահանջները, եթե Պայմանագրով պահանջների ներկայացման այլ ժամկետ նախատեսված չէ:

Կանոնների իմաստով Շահառուի վնասի հատուցման պահանջներ նշանակում են անմիջապես (անմիջականորեն) Ապահովադրին հասցեագրված գրավոր պահանջները (այդ թվում՝ պահանջագրի ձևով), ինչպես նաև դատարան ներկայացված հայցադիմումները վնասի պատճառման փաստի, չափերի և պատճառների վերաբերյալ հաստատված ապացույցներով:

Շահառուն իրավունք չունի անմիջականորեն Ապահովագրողին ներկայացնելու վնասի հատուցման պահանջները, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

3.2.2. Վնասը պատճառվել է Պայմանագրի գործողության ընթացքում կամ եթե դա նախատեսված է Պայմանագրով՝ Պայմանագրի գործողության ավարտից հետո՝ Պայմանագրի կողմերի կողմից համաձայնեցված որոշակի ժամանակահատվածի ընթացքում:

3.2.3. Պայմանագրի գործողության ընթացքում կամ Պայմանագրով նախատեսված դեպքերում մինչև Պայմանագրի գործողության սկիզբը Պայմանագրի կողմերի կողմից համաձայնեցված (սահմանված) որոշակի ժամանակահատվածում ի հայտ եկած հանգամանքները, որոնք առաջացրել են վնասի պատճառում, Պայմանագրի կնքման պահին հայտնի չեն եղել Ապահովադրին:

3.2.4. Վնասը հասցվել է ապահովագրության տարածքում:

3.2.5. Գոյություն ունի պատճառահետևանքային կապ Ապահովադրի գործողությունների (անգործության) և վնասի պատճառման փաստի միջև:

3.2.6. Ապահովադրի (ապահովագրված անձի) քաղաքացիական պատասխանատվության ծագումը (առաջացումը) ընդունվել է վերջինիս կողմից կամավոր կերպով՝ Ապահովագրողի գրավոր համաձայնության առկայությամբ կամ օրինական ուժ է ստացել դատարանի համապատասխան որոշմամբ:

3.3. Մեկ կամ մի քանի փոխկապակցված պատահարների հետևանքով մի քանի Շահառուների կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառված վնասի հետևանքով Ապահովադրի քաղաքացիական պատասխանատվության առաջացումը դիտվում է որպես մեկ ապահովագրական պատահար:

3.4. Ապահովագրական պատահարներ չեն համարվում (և ըստ այդմ չեն հատուցվում) հետևյալ իրադարձությունները՝

3.4.1. Ապահովադրի (Ապահովադրի աշխատակիցների) դիտավորության արդյունքում Շահառուի գույքին վնաս պատճառելը,

3.4.2. Շահառուի գույքին վնաս պատճառվելը՝ վերջինիս դիտավորության արդյունքում,

**ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

3.4.3. Վնասի պատճառումը, որը հետևանք է Ապահովադրի այնպիսի գործունեության, որի իրականացման համար նա ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան թույլատվություն (լիցենզիա, արտոնագիր և այլն) չի ստացել (թեև դրա ստացումը պարտադիր էր), կամ այդ գործունեության թույլտվությունը կասեցված է եղել,

3.4.4. Վնասի պատճառումը, որը հետևանք է ասբեստի և ասբեստ պարունակող ցանկացած արտադրանքի ազդեցության:

3.5. Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա ապահովագրական պատահարներ չեն համարվում և ըստ այդմ չեն հատուցվում՝

3.5.1. Ցանկացած պատերազմի կամ ռազմական գործողության (անկախ այն բանից դրանք եղել են հայտարարված, թե ոչ) և դրանց հետևանքների, քաղաքացիական պատերազմի, զինված ուժերի կամ ահաբեկիչների գործողության, ժողովրդական հուզումների հետևանքով պատճառված վնասները,

3.5.2. Ռադիոակտիվ կամ այլ իոնային ճառագայթման ազդեցության հետևանքով, այդ թվում ռադիոակտիվ ալֆա, բետա, գամմա նյութերի, նեյտրոնների արտազատման, օպտիկական (լազերային), միկրոալիքային (մազերներ), կամ քվանտային գեներատորների արագացուցիչների թունավորված մասնիկներից արտազատվող ճառագայթման հետևանքով առաջացած վնասները,

3.5.3. Ապահովադրի կամ այլ օգտագործողի կողմից ներքին գործերի մարմիններում (ոստիկանությունում) պարտադիր գրանցման ենթակա ավտոտրանսպորտային և մոտոտրանսպորտային միջոցների շահագործման արդյունքում պատճառված վնասը,

3.5.4. Վնասը, որը պատճառվել է Ապահովադրի կողմից օրենքի, այլ իրավական ակտերի, արտադրական կանոնների, նորմերի կամ նորմատիվային փաստաթղթերի դրույթների չկատարման հետևանքով,

3.5.5. Մարդկանց, կենդանիների կամ բույսերի օրգանիզմում գենետիկ փոփոխությունների հետևանքով պատճառված վնասը,

3.5.6. Պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով պատճառված վնասը;

3.5.7. Ապահովադրի կողմից բարձր վտանգավորության աղբյուրների շահագործման կամ դրանք այլ նպատակներով օգտագործման հետևանքով պատճառված վնասը,

3.5.8. Ապահովադրի կողմից Շահառուին ՁԻԱՀ-ով վարակման հետևանքով պատճառված վնասը,

3.5.9. Ապահովադրի կողմից ապահովագրված գործունեություն իրականացնելու ընթացքում իրեն հայտնի դարձած առևտրային գաղտնիքի կամ այլ գաղտնի տեղեկատվության հրապարակելու կամ անձնական նպատակներով օգտագործելու (Ապահովադրի աշխատակիցների անձնական նպատակների օգտագործելու) հետևանքով պատճառված վնասը,

3.5.10. Հեղինակային իրավունքների կամ այլ մտավոր սեփականության օբյեկտների բացառիկ իրավունքների խախտման հետևանքով պատճառված վնասը,

3.5.11. Կոնստրուկցիաների, սարքավորումների կամ նյութերի շահագործման նորմատիվային ժամկետներից ավել օգտագործման հետևանքով պատճառված վնասը,

3.5.12. Ապահովադրի կողմից պատրաստվող (իրացվող, կատարվող կամ մատուցվող) ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) չբավականացման (անբավարարության), ինչպես նաև այդ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) վերաբերյալ ոչ հավաստի կամ ոչ բավարար տեղեկատվության առկայության հետևանքով պատճառված վնասը,

ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՆԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

3.5.13. Շահառուին պատճառված վնասը, որը հետևանք է մշտական, պարբերաբար, կամ երկարատև թերմիկ ազդեցության կամ գազերի, գոլորշիների, ճառագայթների, խոնավության կամ ցանկացած, այդ թվում մթնոլորտում կշռված մասնիկների (ծուխ, փոշի և այլն), բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց ազդեցությունը հանկարծակի է կամ չկանխատեսված և կան ակնհայտ ապացույցներ, որ այդ ազդեցության հետևանքով վնասը անխուսափելի էր:

ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ՊԱՏԱՆԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆ

4.1. Ապահովագրական գումարի չափը որոշվում է Կողմերի համաձայնությամբ և սահմանվում է Պայմանագրում:

4.2. Ապահովագրական գումարը կարող է լինել ագրեգատային և ոչ ագրեգատային: Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա ապահովագրական գումարը ագրեգատային է:

4.2.1. Ոչ ագրեգատային ապահովագրական գումար սահմանված լինելու դեպքում Ապահովագրողը պարտավորվում է վճարել ապահովագրական հատուցում Պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար, ընդ որում ապահովագրական գումարը չի նվազում արդեն վճարված ապահովագրական հատուցման գումարի չափով:

4.2.2. Ագրեգատային ապահովագրական գումար սահմանված լինելու դեպքում Ապահովագրողը պարտավորվում է վճարել ապահովագրական հատուցում Պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած յուրաքանչյուր ապահովագրական պատահարների համար, ընդ որում ապահովագրական գումարը նվազում է արդեն վճարված ապահովագրական հատուցման գումարի չափով:

4.2.3. Ագրեգատային ապահովագրական գումարի սահմաններում Ապահովագրողի կողմից մեկ ապահովագրական պատահարի, ռիսկերի առանձին կատեգորիաների և այլնի գծով կարող է սահմանվել պատասխանատվության սահմաններ: Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա Պայմանագրում նշված մեկ ապահովագրական պատահարի գծով Ապահովագրողի պատասխանատվության սահմանը (լիմիտը) համարվում է բոլոր ռիսկերի համար միասնական սահման:

ԲԱԺԻՆ 5. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ (ՖՐԱՆՇԻԶԱ)

5.1. Պայմանագրում Կողմերը կարող են սահմանել Ապահովագրի մասնակցության չափը վնասի հատուցմանը՝ չհատուցվող գումար (ֆրանշիզա):

5.2. Չհատուցվող գումարը (ֆրանշիզան) կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական:

5.2.1. Պայմանական չհատուցվող գումարի ժամանակ Ապահովագրողը չի վճարում ապահովագրական հատուցում, եթե վնասը չի գերազանցում չհատուցվող գումարի չափը, իսկ եթե վնասը գերազանցում է չհատուցվող գումարի չափը, ապա ապահովագրական հատուցումը վճարվում է վնասի ամբողջ ծավալով:

5.2.2. Ոչ պայմանական չհատուցվող գումարի ժամանակ ապահովագրական հատուցումը պակասեցվում է չհատուցվող գումարի չափով:

**ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱԿԱԳԻՆ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ,
ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ԶՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ**

6.1. Ապահովագրական սակագնի մեծությունը սահմանվում է Ապահովագրողի կողմից՝ ելնելով ռիսկի աստիճանից, Պայմանագրի ժամկետից, չհատուցվող գումարից (ֆրանշիզայից) և Պայմանագրի այլ պայմաններից:

6.2. Ապահովագրավճարի մեծությունը հաշվարկվում է Ապահովագրողի կողմից՝ ապահովագրական գումարի մեծությունը բազմապատկելով Պայմանագրով սահմանված Ապահովագրական սակագնի մեծությամբ:

6.3. Ապահովագրավճարներն Ապահովադրի կողմից կարող են վճարվել միանվագ՝ ամբողջ ապահովագրության ժամկետի համար կամ մաս-մաս: Ապահովագրավճարի վճարման կարգը սահմանվում է Պայմանագրով:

6.4. Ապահովագրավճարներն Ապահովադրի կողմից կարող են վճարվել կանխիկ կերպով Ապահովագրողի դրամարկղ կամ ներկայացուցչին, իսկ անկանխիկ հաշվարկների դեպքում՝ Ապահովագրողի համապատասխան հաշվարկային հաշվին:

6.5. Ապահովագրավճարի վճարման կարգը և ձևը որոշվում են Ապահովագրողի և Ապահովադրի փոխադարձ համաձայնությամբ և սահմանվում են Պայմանագրով:

6.6. Եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել մինչև հերթական ապահովագրավճարի վճարումը, որը կետանցվել է, ապա ապահովագրողն իրավունք ունի վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափը որոշելիս հաշվանցելու կետանցված ապահովագրավճարի չափը:

6.7. Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը, եթե պայմանագրով նախատեսված չէ այլ ժամկետ կամ ապահովագրավճարի մուծման տարաժամկետման հնարավորություն:

6.8. Եթե Ապահովադիրն Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում չի վճարել հերթական ապահովագրավճարը, ապա ապահովագրողն իրավունք ունի ապահովագրավճարի վճարման համար սահմանված ժամկետից երեք օր (լրացուցիչ ժամկետ) հետո միակողմանի լուծելու Պայմանագիրը՝ առանց այդ մասին ապահովադիրին ծանուցելու:

**ԲԱԺԻՆ 7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ԵՎ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄ**

7.1. Պայմանագիրը կնքվում է գրավոր:

7.2. Պայմանագիրը կնքվում է Ապահովադրի բանավոր կամ գրավոր դիմումի հիման վրա՝ Ապահովագրողի կողմից սահմանված հարցաթերթիկը պատշաճ կերպով լրացնելուց հետո:

7.3. Ապահովագրողն ապահովագրության դիմումը և հարցաթերթիկը ստանալուց հետո իրավունք ունի Ապահովադրից պահանջել փաստաթղթեր և ուղղակի կամ անուղղակի տվյալներ՝ կապված ապահովագրական պատահար տեղի ունենալու հավանականության և դրա հետևանքով հնարավոր վնասների մեծության որոշման համար նշանակություն ունեցող հանգամանքների հետ:

7.4. Պայմանագրի կնքումը հավաստվում է Ապահովագրողի կողմից Ապահովադրին ապահովագրության վկայագիր տրամադրելու կամ Պայմանագիր կազմելու միջոցով:

**ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

Ապահովագրության վկայագիրը և Պայմանագիրը պետք է ստորագրված լինեն Ապահովագրողի անունից լիազորված անձի և Ապահովադրի կողմից:

7.5. Պայմանագիրը կնքվում է Ապահովագրողի և Ապահովադրի համաձայնությամբ ցանկացած ժամկետով:

7.6. Պայմանագրի գործողության ժամկետի սկիզբը և ավարտը նշվում են Պայմանագրում: Պայմանագրի ժամկետի սկիզբը չի կարող լինել Պայմանագրի կնքման ժամկետից շուտ:

7.7. Պայմանագրի գործողությունը դադարում է՝

ա) Պայմանագրում նշված ժամկետի լրանալուց հետո,

բ) Ապահովագրողի կողմից Կանոնների և դրանց հիման վրա կնքված Պայմանագրով ստանձնած իր պարտավորություններն ամբողջ ծավալով կատարելուց հետո: Ընդ որում ոչ մի լրացուցիչ փոխադարձ հաշվարկ կողմերի միջև չի կատարվում,

գ) եթե ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականությունը վերացել կամ ապահովագրական ռիսկի գոյությունը ընդհատվել է,

դ) Կողմերի համաձայնությամբ,

ե) օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով և Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

7.8. Ապահովադիրն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին ոչ պակաս քան 15 օր առաջ ծանուցելով Ապահովագրողին:

7.9. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել նաև՝

ա) Ապահովագրողի պահանջով Կանոնների 8.1 կետով նախատեսված Ապահովադրի պարտականությունների չկատարման դեպքում, ինչպես նաև, եթե Ապահովադիրը դեմ է Պայմանագրի պայմանների փոփոխությանը կամ ռիսկի աստիճանի մեծացմանը հանգեցնող հանգամանքների տեղի ունենալու հետևանքով լրացուցիչ ապահովագրավճարի վճարմանը: Ապահովագրողն իրավունք չունի պահանջել Պայմանագրի լուծում այն դեպքում, երբ ռիսկի աստիճանի մեծացմանը հանգեցնող հանգամանքներն արդեն վերացել են: Պայմանագիրը սույն ենթակետի հիման վրա լուծելու դեպքում, Ապահովագրողն իրավունք ունի պահանջել Պայմանագրի լուծումից պատճառված վնասների հատուցում:

բ) Ապահովագրողի պահանջով և նրա հետ համաձայնեցված ժամանակի ընթացքում ռիսկի աստիճանը մեծացնող հանգամանքները (որոնց վերաբերյալ Ապահովագրողը ընդունված նորմերին համապատասխան տեղեկացրել էր Ապահովադրին) Ապահովադրի կողմից չվերացնելու դեպքում:

7.10. Ապահովադրի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովագրողն Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարները՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ ապահովագրավճարի հաշվարկման համար որպես հիմք ընդունվում են Պայմանագրի համաձայն Ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարի 70%-ը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Եթե Ապահովադրի պահանջները պայմանավորված են Ապահովագրողի կողմից ապահովագրության պայմանների և Կանոնների խախտմամբ, ապա Ապահովագրողն Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարները՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ ապահովագրավճարի հաշվարկման համար որպես հիմք ընդունվում են Պայմանագրի համաձայն Ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարի 80%-ը:

7.11. Ապահովագրողի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին են վերադարձվում ապահովագրավճարներն ամբողջությամբ, իսկ եթե

ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Ապահովագրողի պահանջները պայմանավորված են Ապահովագրի կողմից Պայմանագրի և Կանոնների խախտմամբ, ապա վերջինս Ապահովագրին է վերադարձնում ապահովագրավճարները՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ ապահովագրավճարի հաշվարկման համար որպես հիմք ընդունվում են Պայմանագրի համաձայն Ապահովագրի կողմից վճարված ապահովագրավճարի 70 %-ը:

7.12. Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովագրին չեն վերադարձվում ապահովագրավճարները, եթե Ապահովագիրը տվյալ Պայմանագրի գծով դիմել է ապահովագրական հատուցում ստանալու համար (բացառությամբ այն դեպքի, երբ ապահովագրական հատուցումը մերժվել է և Ապահովագիրը համաձայնվել է Ապահովագրողի կողմից տրամադրված մերժման վերաբերյալ եզրակացության հետ) կամ ստացել է ապահովագրական հատուցում:

ԲԱԺԻՆ 8. ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

8.1. Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագիրը պարտավոր է անհապաղ տեղեկացման փաստը հավաստող ցանկացած եղանակով (իսկ բոլոր դեպքերում պատահարը տեղի ունենալուց ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում՝ գրավոր) տեղյակ պահել Ապահովագրողին Պայմանագրի կնքման պահին իր կողմից Ապահովագրողին ներկայացված հանգամանքների վերաբերյալ կատարված փոփոխությունների մասին:

8.2. Ապահովագրողը, ծանուցված լինելով ռիսկի աստիճանի մեծացման հանգամանքների մասին, իրավունք ունի Ապահովագրից պահանջել Պայմանագրի պայմանների փոփոխում կամ ռիսկի աստիճանի մեծացման չափին համապատասխան լրացուցիչ ապահովագրավճարի մուծում:

ԲԱԺԻՆ 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՆՇԱՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՊԱՏԱՀԱՐԻ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

9.1. Ապահովագրին ապահովագրական պատահարի նշաններ ունեցող պատահարի տեղի ունենալու մասին իրեն հայտնի դառնալու դեպքում պարտավոր է՝

9.1.1. վերոհիշյալ հանգամանքների իրեն հայտնի դառնալուց հետո անհապաղ, տեղեկացման փաստը հավաստող ցանկացած եղանակով (հեռախոս, ֆաքս և այլն) տեղեկացնել Ապահովագրողին այդ պատահարի տեղի ունենալու մասին՝ նշելով պատահարի հանգամանքների մասին իրեն հայտնի անհրաժեշտ տեղեկատվությունը և ոչ ուշ քան Ապահովագրին վնասի պատճառման մասին հայտնի դառնալու ամսաթվից հետո 72 ժամվա ընթացքում՝ այդ մասին գրավոր հայտնել Ապահովագրողին:

Ապահովագրողին հայտնվող տեղեկատվությունը նախ և առաջ պետք է պարունակի Ապահովագրին հայտնի ամբողջ տեղեկատվությունը պատահարի (վնասի) տեղի ունենալու հանգամանքների մասին, մասնավորապես տեղեկատվության մեջ ներառելով պատահարի տեղի ունենալու ամսաթիվը, ժամը, վայրը, հավանական պատճառները, պատճառված վնասի բնույթը և չափը, պատահարին ներգրավված անձանց անունները, հասցեները և Պայմանագրի (ապահովագրության վկայագրի) համարը:

Ապահովագիրը պարտավոր է գրավոր հայտնվող տեղեկատվությունը ուղարկել Ապահովագրողին նրա փոստային հասցեով (գտնվելու վայրի հասցեով) կամ ֆաքսիմիլային կապի միջոցով կամ հանձնել Ապահովագրողի ներկայացուցչին:

Վեճերի ծագման դեպքում, Ապահովագրի այս պարտականությունների պատշաճ կատարման փաստը պետք է հավաստվի համապատասխան գրավոր ապացույցներով:

**ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

Եթե Ապահովադիրն Ապահովագրողին չի հայտնել ապահովագրական պատահարի մասին սույն կետում նշված կարգով և (կամ) ժամկետներում, ապա Ապահովագրողը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1017 հոդվածի 2-րդ մասի համաձայն իրավունք ունի չվճարելու ապահովագրական հատուցումը, եթե չապացուցվի, որ Ապահովագրողը ժամանակին իմացել է ապահովագրական պատահարի վրա հասնելու մասին կամ, որ այդ մասին Ապահովագրողի մոտ տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել ապահովագրական հատուցում վճարելու նրա պարտականության վրա:

9.1.2. Ստեղծված իրավիճակում ձեռնարկել ողջամիտ և հնարավոր միջոցառումներ Շահառուի կյանքին, առողջությանը և գույքին հասցված վնասը կանխելու կամ նվազեցնելու ուղղությամբ: Ապահովադիրը պարտավոր է հետևել Ապահովագրողի ցուցումներին, եթե այդպիսի ցուցումներ նրան տրվել են: Ապահովադիրը պարտավոր է նախաձեռնել ողջամիտ և հնարավոր միջոցներ ստեղծված իրադրության պատճառների ընթացքը և հետևանքները պարզելու նպատակով:

9.1.3. Եթե իրավասու մարմինների կողմից վարվում է քննություն, հարուցված է քրեական գործ, կիրառվել է կալանք, տուգանքի կամ վնասի հատուցման հետ կապված ընդունված է համապատասխան որոշում, ապա Ապահովադիրը պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել Ապահովագրողին:

9.1.4. Մինչև Շահառուի վնասված գույքի վերանորոգումն Ապահովագրողի փորձագետին (ներկայացուցչին) ապահովել այդ գույքի զննման և պատճառված վնասի գնահատման հնարավորությունը:

9.1.5. Պարբերաբար Ապահովագրողին տեղեկացնել պատահարի հետաքննության ընթացքի, պատահարի պատճառների, հետևանքների մասին և մասնակցություն ունենալ այդպիսի հետաքննություններում:

9.1.6. Անհապաղ տեղեկացնել Ապահովագրողին՝

ա) վնասի պատճառման առնչությամբ իրեն ներկայացված գույքային բնույթի բոլոր պահանջների և հայցերի մասին: Այդպիսի պահանջների ստացման դեպքում Ապահովադիրը պարտավոր է նախաձեռնել բոլոր միջոցները, որպեսզի Շահառուն հայցով չներկայանա դատարան մինչև Ապահովագրողի կողմից Շահառուի պահանջի քննարկումը: Շահառուի պահանջի քննարկման ընթացքում Ապահովադիրն Ապահովագրողի ցուցումով պարտավոր է ուղարկել գրավոր հարցումներ պահանջելով անհրաժեշտ փաստաթղթեր (այն դեպքում, երբ նշված փաստաթղթերը կարող են տրվել միայն Ապահովադիրին)՝ վնասի պատճառման հետ կապված Ապահովագրողի կողմից ուսումնասիրություն և հետաքննություն անցկացնելու համար,

բ) պատճառված վնասի փաստի առթիվ համապատասխան իրավասու մարմինների կողմից քրեական գործ հարուցելու քրեական-դատավարական գործողություններ սկսելու մասին,

գ) մինչև Ապահովագրողի կողմից գործի ուսումնասիրելը, հետաքննելը և որոշում կայացնելը, Շահառուի հայցադիմումով դատարան ներկայանալու մասին: Այս դեպքում Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողի պահանջով Ապահովագրողին կամ նրա կողմից նշված անձին տալ լիազորագիր, որն իրավունք կտա՝

- բոլոր անհրաժեշտ դատավարական լիազորություններով, այդ թվում հայցը ընդունելու իրավունքով, դատական գործընթացում ներկայացնել Ապահովադիրին(պատասխանողին),

- հանդես գալ Շահառուների և նրանց ներկայացուցիչների հետ բանակցություններում,

- հասցված վնասի հանգամանքների, պատճառների և չափերի պարզաբանման նպատակով համապատասխան միջոցներ ձեռնարկել:

**ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

9.1.7. Առանց Ապահովագրողի գրավոր համաձայնությամբ պատճառված վնասի հետ կապված պահանջ չընդունել, պահանջի կարգավորման համար չստանձնել որևէ պարտավորություն և չհատուցել պատճառված վնասը:

**ԲԱԺԻՆ 10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳ ԵՎ
ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳ**

10.1. Ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) գրավոր դիմում,

բ) Պայմանագրի բնօրինակը (Ապահովադրի մոտ առկա տարբերակը),

գ) Ապահովադրի (Շահառուի) իրավաբանական անձի լինելու դեպքում՝ նրա կանոնադրության և պետական գրանցման վկայականի պատճենները, անհատ ձեռներեց լինելու դեպքում՝ պետական գրանցման վկայականի պատճենը,

դ) Պետական մարմինների կողմից սահմանված կարգով տրված Ապահովադրի համապատասխան գործունեություն իրականացնելու իրավունքը հավաստող փաստաթղթի պատճենը (թույլտվություն, լիցենզիա),

ե) պատճառված վնասի հանգամանքներին, պատճառներին և չափերին վերաբերող փաստաթղթերը կամ դրանց պատճենները (վնասված գույքի հետազոտման ակտեր, հաշիվ ապրանքագրեր, գնման պահանջագրեր, կտրոններ, անդորրագրեր, փորձագիտական եզրակացություններ և այլն), այդ թվում՝ համապատասխան իրավասու պետական մարմինների կողմից տրված փաստաթղթերը՝

- հրդեհի դեպքում՝ հրշեջ ծառայության կողմից տրված եզրակացությունը,

- պայթյունի կամ ճեղքվածքի դեպքում՝ համապատասխան վթարային ծառայության կողմից տրված ակտը,

- քրեական գործի հարուցման կամ հարուցման մերժման վճռի մասին գրավոր հաղորդագրությունը (փաստաթուղթը) կամ դրա պատճենը, այն բոլոր դեպքերում, երբ վնասի առաջացման պատճառների հանգամանքների քննությանը մասնակցում են ոստիկանությունը, դատախազությունը և այլ իրավապահ մարմինները,

զ) դատարանի որոշումը, դատական մարմինների ակտերը (գործը դատարանում քննվելու դեպքում) կամ դրանց պատճենները,

է) բժշկական հաստատությունների կողմից տրված և գլխավոր բժշկի կողմից ստորագրված փաստաթղթերը կամ բժշկական փորձաքննության մարմնի եզրակացությունը (ֆիզիկական անձի առողջությանը պատճառված վնասի դեպքում),

ը) մահվան վկայականի և ժառանգության իրավունքները հավաստող փաստաթղթերի պատճենները (Շահառու հանդիսացող ֆիզիկական անձի մահվան դեպքում),

թ) քաղաքացիական անձնագրի (զինվորականների համար անձը հաստատող փաստաթղթի) պատճենը, եթե Ապահովադիրը (Շահառու) հանդիսանում է ֆիզիկական անձ,

ժ) Շահառուին պատճառված վնասի Ապահովադրի կողմից հատուցման ծախսերը հաստատող փաստաթղթերը:

10.2. Ապահովագրողն իրավունք ունի կրճատել Կանոնների 10.1 կետում նշված փաստաթղթերի ցանկը կամ Ապահովադրից պահանջել վերը նշվածից բացի լրացուցիչ այլ փաստաթղթեր, եթե հաշվի առնելով դեպքի հետ կապված կոնկրետ հանգամանքները, դրանց բացակայությունը անկարելի է դարձրել ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստի ճանաչումը և վնասի չափի որոշումը:

**ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

10.3. Ապահովագրողն իրավունք ունի իրականացնել Ապահովադրի (Շահառուի) անձնական տվյալների մշակում՝ Ապահովագրական պայմանագրի կնքման, կատարման, ուղարկման, պայմանագրի բխող իր իրավունքների իրականացման նպատակներով:

10.4. Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է Կանոնների 10.1 և 10.2 կետերում նշված փաստաթղթերը ներկայացնել պատահարի վերաբերյալ Ապահովագրողին գրավոր դիմում ներկայացնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Այդ ժամկետում Ապահովադրի (Շահառուի) կողմից անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու կամ գրավոր որևէ միջնորդություն սահմանված երկու ամսյա ժամկետը երկարաձգելու մասին չներկայացնելու դեպքում, Ապահովագրողը Կանոնների համաձայն Ապահովադրի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով մերժում է ապահովագրական հատուցման վճարումը, սույն կետում սահմանված ժամկետը լրանալուց հետո հնգօրյա ժամկետում:

Այն դեպքում, երբ Ապահովադիրը գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարացնելու մասին, ապա Ապահովագրողը ելնելով տվյալ գործի հանգամանքներից կարող է այդ ժամկետը երկարաձգել մինչև վեց ամիս ժամկետով: Այդ ժամկետում Ապահովադրի կողմից սահմանված պարտավորության չկատարման հետևանքները նույնանում են սույն կետի երկրորդ պարբերությունում սահմանված դրույթների հետ:

10.5. Պատահարի առաջացումից հետո Ապահովագրողն իրավունք ունի դիմելու անկախ փորձագետների՝ ապահովագրական դեպքի պատճառները բացահայտելու և վնասի չափը ճշտելու համար, ինչպես նաև ապահովագրական հատուցման չափը որոշելիս հիմնվելու վերջիններիս եզրակացությունների վրա:

10.6. Անհրաժեշտության դեպքում տեղի ունեցած պատահարի վերաբերյալ տեղեկություն ստանալու նպատակով Ապահովագրողը կարող է դիմել պետական մարմինների, կազմակերպությունների կամ այլ անձանց, ովքեր տիրապետում են ապահովագրական պատահարի վերաբերյալ տեղեկատվությանը:

10.7. Ապահովագրողն իրավունք ունի անձամբ հետաքննելու ապահովագրական պատահարի հանգամանքները կամ վնասի չափի որոշման համար նշանակել իր ներկայացուցչին: Տարածայնությունների դեպքում Պայմանագրի կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի պահանջել, որպեսզի վնասի չափը որոշվի անկախ փորձագետների կողմից: Այս դեպքում փորձաքննության ծախսերն իրականացվում են այդպիսի պահանջ ներկայացնող Կողմի հաշվին:

10.8. Կանոններով նախատեսված Ապահովադրի պարտականությունների չկատարումն իրավունք է տալիս Ապահովագրողին մերժել ապահովագրական հատուցումը, եթե չի ապացուցվում, որ Ապահովագրողը ժամանակին տեղեկացվել է ապահովագրական պատահար տեղի ունենալու մասին, կամ որ Ապահովագրողի մոտ այդպիսի տեղեկատվության պակասն ազդել է նրա ապահովագրական հատուցման վճարման պարտականության վրա:

10.9. Ապահովագրողն իրավունք ունի երկարացնել ապահովագրական հատուցման վճարման ժամկետը, եթե՝

ա) նշանակված է լրացուցիչ փորձաքննություն ապահովագրական դեպքի հետևանքով առաջացած վնասի մեծության որոշման նպատակով: Այս դեպքում ապահովագրական հատուցման հաշվարկը սկսվում է Ապահովագրողի կողմից լրացուցիչ փորձաքննության հետ կապված փաստաթղթերի ստացման օրվանից,

**ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

բ) ապահովագրական պատահարի փաստի առիթով հարուցված է քրեական գործ: Այս դեպքում ապահովագրական հատուցման հաշվարկը սկսվում է իրավասու մարմինների կողմից ընդունված որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից,

գ) Ապահովագրի կամ Շահառուի ապահովագրական հատուցման ստացման իրավասությունների վերաբերյալ կան հիմնավոր կասկածներ: Ընդ որում հատուցում չի վճարվում, քանի դեռ չեն ներկայացվել անհրաժեշտ ապացույցներ,

դ) Կանոններով հատուցման վճարմանը խանգարող այլ իրավիճակների առկայության դեպքում: Այս դեպքում ապահովագրական հատուցման հաշվարկը սկսվում է խանգարող իրավիճակի վերացման օրվանից:

10.10. Եթե ապահովագրական պատահարի հանգամանքների վերաբերյալ իրավասու մարմինների կողմից տրված փաստաթղթերից բխի, որ Ապահովագրի և տուժած անձի մեղավորությունը երկկողմանի համահավասար է, ապա Ապահովագրողն իրավունք ունի տուժած անձին վճարել ապահովագրական հատուցում՝ կախված ապահովագրական պատահարում նրա ունեցած մեղքի աստիճանից: Այդ մեղքի աստիճանը որոշվում է ներկայացված փաստաթղթերի հիման վրա և Պայմանագրի կողմերի համաձայնությամբ, իսկ փոխհամաձայնության չգալու դեպքում՝ դատական կարգով:

10.11. Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցման վճարումը, եթե պատահարի քննության արդյունքում պարզվի, որ Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրի կողմից իրեն հայտնվել են Ապահովագրի մասնագիտական ռիսկի մասին կեղծ տեղեկություններ, ինչպես նաև այն դեպքերում, երբ Ապահովագրի կամ Շահառուի կողմից իրականացվել են միտումնավոր գործողություններ, որոնք ուղղված են եղել կամ նպաստել են ապահովագրական պատահարի տեղի ունենալուն:

10.12. Ապահովագրողն ապահովագրական պատահարի մասին օրենքով, այլ իրավական ակտերով և Կանոններով նախատեսված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո 5 օրվա ընթացքում պարտավոր է օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն ընդունել ապահովագրական հատուցումը վճարելու կամ մերժելու մասին եզրակացություն (որոշում):

10.13. Ապահովագրողն ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումը պատշաճ կերպով՝ Ապահովագրին (Շահառուին) անձամբ հանձնելու միջոցով կամ Ապահովագրի (Շահառուի) հասցեով փոստային առաքմամբ, տրամադրում է Ապահովագրին (Շահառուին):

10.14. Ապահովագրական հատուցման նվազեցման կամ հատուցման մերժման դեպքում Ապահովագրողի կայացրած պատճառաբանված որոշումը հնգօրյա ժամկետում պատվիրված նամակով առաքվում է Ապահովագրին (Շահառուին)՝ նրա մշտական բնակության հասցեով:

10.15. Հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից 30 օրվա ընթացքում Ապահովագրողը պարտավորվում է միանվագ իրականացնել ապահովագրական հատուցումը, եթե Ապահովագրողը և Ապահովագրիրը (Շահառուն) ապահովագրական հատուցման վճարման այլ կարգ կամ ժամկետ չեն համաձայնեցրել:

10.16. Ապահովագրական հատուցման վճարումը կարող է կատարվել Շահառուի ներկայացուցչին՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով: Եթե Շահառուն հանդիսանում է անչափահաս, ապա նրան հասանելիք գումարը օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով տրվում է նրա օրինական ներկայացուցիչներին (խնամակալին, խնամակալության մարմիններին և այլն): Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա Պայմանագրում մեկից ավելի Շահառու նախատեսված լինելու դեպքում ապահովագրական հատուցման գումարը օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով բաժանվում է Շահառուների միջև:

ԲԱԺԻՆ 11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՈՐՈՇՈՒՄ

11.1. Ապահովագրական հատուցման չափը որոշվում է Ապահովագրողի կողմից՝ այն փաստաթղթերի հիման վրա, որոնք հաստատում են ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը և պատճառված վնասի չափերը:

11.2. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստի ճանաչման դեպքում Ապահովագրողը Կանոնների համաձայն իրականացնում է ապահովագրական հատուցում ապահովագրական պատահարի հետևանքով Շահառուին հասցված վնասի չափով, բայց ոչ ավել, քան Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի չափը, իսկ Պայմանագրով յուրաքանչյուր ապահովագրական պատահարի (ռիսկի) համար առավելագույն պատասխանատվության չափ սահմանված լինելու դեպքում՝ այդ սահմանված չափը:

11.3. Կանոններում վնաս ասելով պետք է հասկանալ՝

11.3.1. Կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հետ կապված Շահառուի կրած ծախսերը, որոնք են՝

- աշխատավարձը, որից ֆիզիկական անձ հանդիսացող Շահառուն զրկվել է հաշմանդամության կամ առողջությանը պատճառված այլ վնասի հետևանքով առաջացած աշխատունակության կորստի կամ դրա նվազման պատճառով,

- առողջության վերականգման համար լրացուցիչ ծախսերը (բուժման ծախսեր, լրացուցիչ սնունդ, դեղորայքի ձեռքբերում, պրոթեզավորում, կողմնակի խնամք, սանիտար-կուրորտային բուժում, հատուկ տրանսպորտային միջոցների ձեռքբերում, այլ մասնագիտության գծով պատրաստում, եթե սահմանված է, որ տուժող անձը թվարկված օգնությունների և խնամքի կարիքն ունի և չունի դրանց անվճար ստացման իրավունք),

- աշխատավարձի մասը, որից ֆիզիկական անձ հանդիսացող Շահառուի մահվան դեպքում զրկվել են նրա խնամակալության տակ գտնվող կամ նրանից նյութական միջոցներ ստանալու իրավունքներ ունեցող անաշխատունակ անձինք,

- հուղարկավորության ծախսերը:

Կանոնների 11.3.1 կետով նախատեսված ծախսերի հատուցումը վճարվում է համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված չափերի:

11.3.2. Ծախսերը, որոնք գույքային վնասի պատճառման հետևանքով կրել է Շահառուն: Այդ ծախսերը որոշվում են գույքի վնասման կամ ոչնչացման արդյունքում առաջացած իրական չափով, ինչպես նաև խախտված իրավունքների վերականգնմանն ուղղված ծախսերով, մասնավորապես՝

ա) գույքի լրիվ ոչնչացման դեպքում իրական վնասը հավասար է ոչնչացված գույքի իրական արժեքին՝ հանած մաշվածությունը և օգտգործման ենթակա մնացորդների արժեքը,

բ) գույքի մասնակի վնասվելու դեպքում իրական վնասը որոշվում է ծախսերի այն չափով, որոնք անհրաժեշտ են վնասված գույքը մինչև ապահովագրական պատահարի տեղի ունենալու վիճակը բերելու համար:

Վնասված գույքը մինչև ապահովագրական պատահարի տեղի ունենալու վիճակին բերելու անհնարինության դեպքում, իրական վնասը որոշվում է այն գումարով, որի չափով նվազել է գույքի իրական արժեքն ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետևանքով:

Եթե գույքի մասնակի վնասման դեպքում վերջինիս վերականգման ծախսերը մեծ լինեն գույքի իրական արժեքից, ապա որպես ապահովագրական հատուցման չափ կընդունվի տվյալ գույքի իրական արժեքը:

ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Կանոններում խախտված իրավունքների վերականգնմանն ուղղված ծախսեր ասելով հասկանում ենք Շահառուի կողմից հետևյալ ծառայությունների համար վճարված ծախսերը՝

- մասնագիտացված, սերվիսային, վերանորոգման կազմակերպություններին (ծառայություններին) վնասված գույքը քանդելու, վերանորոգելու, հավաքելու, կորցրածի փոխարեն նոր գույք առաքելու համար,

- կենցաղային սպասարկման ծեռնարկության, քիմմաքրման, լվացքատան,

- փրկարար ծառայությանը, եթե տեղի ունեցած հանգամանքներով նրանց կանչը արդարացված է,

- վարձույթային կազմակերպություններին, որոնք գույքի վերանորոգման ժամանակահատվածում տրամադրել են վնասված գույքին փոխարինող գույք, և եթե այդ գույքի բացակայությունը կփոխեր Շահառուի կյանքի առօրյա բնույթը կամ կհանգեցներ լրացուցիչ վնասների,

- այլ ծառայությունների, ծեռնարկությունների, կազմակերպությունների, եթե դրանց մասնակցությունը վնասների կարգավորման հարցում Ապահովագրողի կողմից ճանաչվում է հիմնավորված և նպատակային:

11.4. Հայցերի (դիմումների) մինչդատական կարգով կարգավորման դեպքում պատճառված վնասի չափը Ապահովագրողի կողմից որոշվում է ապահովագրական պատահարի փաստը, հանգամանքները, ապահովագրական պատահարի հետևանքով վնասի չափը հավաստող փաստաթղթերի հիման վրա: Հայցերի (դիմումների) մինչդատական կարգով կարգավորման դեպքում ապահովագրական հատուցում իրականացնելու համար բավարար հիմքերի բացակայությամբ պայմանավորված Ապահովագրողն ապահովագրական հատուցում իրականացնելու մասին որոշումն ընդունում է դատական մարմինների որոշման հիման վրա:

11.5. Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում, Ապահովագրողն Ապահովադրին հատուցում է հետևյալ լրացուցիչ ծախսերը՝

ա) Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա վնասների նվազեցման նպատակով Ապահովադրի կողմից կատարած ծախսերը, եթե այդպիսի ծախսերը անհրաժեշտ են եղել կամ կատարվել են Ապահովագրողի ցուցումների համաձայն,

բ) ապահովագրական պատահարի գործը դատական մարմիններում վարելու համար Ապահովադրի կատարած ծախսերը, եթե դրանք կատարվել են Ապահովագրողի գրավոր ցուցումներին համաձայն կամ նրա գրավոր համաձայնությամբ,

գ) Ապահովագրական պատահարի հետ կապված պատճառների և հանգամանքների պարզաբանման նպատակով Ապահովադրի կողմից կատարված անհրաժեշտ և նպատակահարմար ծախսերը, եթե դրանք կատարվել են Ապահովագրողի գրավոր համաձայնությամբ:

11.6. Ապահովագրական հատուցման վճարումը Կանոնների 11.3 կետում նշված չափերով կատարվում է Շահառուին կամ Ապահովադրին, եթե վերջինս Ապահովագրողի հետ գրավոր համաձայնությամբ հատուցել է Շահառուին պատճառած վնասը: Ապահովագրական հատուցման վճարումը Ապահովադրին միանվագ կարող է կատարվել նաև եթե օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում Ապահովադիրը պարտավոր է պատճառված վնասի համար վճարել հատուցում ամսեկան կամ այլ պարբերական մոծումներով:

Կանոնների 11.5 կետում նշված ծախսերի վճարումը կատարվում է Ապահովադրին:

11.7. Ապահովագրական հատուցման վճարումը Շահառուին կամ Ապահովադրին կատարվում է անկանխիկ եղանակով Շահառուի կամ Ապահովադրի հաշվարկային հաշվին

**ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

դրամական միջոցների փոխանցման միջոցով կամ կանխիկ եղանակով՝ Ապահովագրողի դրամարկղից:

11.8. Անկանխիկ հաշվարկների դեպքում ապահովագրական հատուցման վճարման ամսաթիվ է հանդիսանում Ապահովագրողի հաշվարկային հաշվից դրամական միջոցների դուրս գրման ամսաթիվը, կանխիկ հաշվարկների դեպքում՝ Ապահովագրողի դրամարկղից դրամական միջոցների ելքի ամսաթիվը:

11.9. Եթե ապահովագրական պատահար տեղի ունենալու օրը Ապահովագրողի քաղաքացիական պատասխանատվությունը երրորդ անձանց նկատմամբ ապահովագրված է նաև այլ ապահովագրական ընկերություններում, ապա Ապահովագրողն ապահովագրական հատուցում է վճարում այն չափով, որքանով որ Ապահովագրողի Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը համամասնական է բոլոր այլ ապահովագրության Պայմանագրերով սահմանված ընդհանուր ապահովագրական գումարների հանրագումարին:

11.10. Կանոնների համաձայն հատուցման ենթակա չեն Ապահովագրողի կողմից վճարման ենթակա տույժերը, տուգանքները, այլ պատժամիջոցները:

11.11. Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա Կանոնների համաձայն հատուցման ենթակա չեն՝

ա) Չստացված (բացթողնված) շահույթը (եկամուտը), որը Շահառուն կստանար առօրյա քաղաքացիական շրջանառության պայմաններում, եթե նրա իրավունքները խախտված չլինեին (բաց թողնված շահույթ),

բ) Քաղաքացուն պատճառված բարոյական վնասը կամ իրավաբանական անձի գործարար համբավին պատճառված վնասը:

11.12. Եթե Շահառուին պատճառված վնասը ենթակա է հատուցման ոչ միայն Ապահովագրողի կողմից, այլ նաև վնասի պատճառման համար պատասխանատու այլ անձանց կողմից, ապա Ապահովագրողը հատուցում է Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի սահմաններում պատճառված վնասի և այն գումարի տարբերության չափը, որը պատճառված վնասի համար պատասխանատու անձանցից ենթակա է ազգրավման (գանձման):

Ապահովագրողը պարտավոր է Ապահովագրողին տեղեկացնել այդպիսի անձանց առկայության և այդպիսի անձանցից գանձման ենթակա հատուցման գումարների մասին:

11.13. Վճարման ենթակա ապահովագրական հատուցման գումարից մասհանվում է ապահովագրական պատահար տեղի ունենալու ժամանակ չվճարված հերթական ապահովագրավճարի մեծությունը և ոչ պայմանական չհատուցվող գումարը:

ԲԱԺԻՆ 12. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

12.1. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան Ապահովագրողը (Շահառուն) Ապահովագրողին տալիս է իր համաձայնությունը մշակելու ներկայացված փաստաթղթերում և տեղեկություններում պարունակվող իր անձնական տվյալները՝ Ապահովագրողի հետ կնքված ապահովագրական պայմանագրի կատարումն ապահովելու, դրանից բխող իր իրավունքներն իրականացնելու, Ապահովագրողի հետ իրավական փոխհարաբերություններն երկարաձգելու, Ապահովագրողի այլ ապահովագրական ապրանքների և ծառայությունների մասին տեղեկացնելու նպատակներով: Ապահովագրողը համաձայն է, որ Ապահովագրողը տրամադրի Շահառուին՝ ապահովագրության պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ընթացքի մասին տեղեկություններ, այդ թվում՝

**ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

ապահովագրավճարների չափի և վճարման փաստի, ապահովագրական գումարի մեծության, ապահովագրական պատահարի առաջացման փաստի կամ հավանականության, պահանջների առաջացման և մարման, ապահովագրական հատուցման վճարման մասին, ինչպես նաև ապահովագրական պայմանագրի հետ կապված այլ տեղեկություններ: Վերոհիշյալ նպատակներին հասնելու համար Ապահովագրողն իրավունք ունի փոխանցել ապահովագրական պայմանագրի կնքման և կատարման հետ կապված իրեն հայտնի դարձած անձնական տվյալները երրորդ անձանց (այդ թվում՝ փոխանցել դրանք վերաապահովագրողներին՝ վերաապահովագրության պայմանագրեր կնքելու և կատարելու նպատակով), որոնց հետ Ապահովագրողը ունի համապատասխան պայմանագրեր, որոնք ապահովում են անձնական տվյալների անվտանգ պահպանումը և անօրինական բացահայտումից (գաղտնագերծումից) պաշտպանությունը:

12.2. Սույն Կանոնների իմաստով անձնական տվյալները ներառում են, մասնավորապես՝ Ապահովագրի (Շահառուի) անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, սոցիալական քարտի/հանրային ծառայության համարանիշը կամ դրանք չունենալու մասին տեղեկանքի տվյալները, հասցեն, հեռախոսահամարը, ինչպես նաև անձնական կենսաչափական և հատուկ տվյալները (այդ թվում՝ առողջական վիճակի, ռասայական և(կամ) ազգային պատկանելության, արհեստակցական միությանն անդամակցման, սեռական կյանքին վերաբերող տեղեկությունները, լուսանկարը, ծայնագրությունը և այլն) և/կամ այլ տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել Ապահովագրի (Շահառուի) ինքնությունը: Անձնական տվյալներ մշակելը նշանակում է ցանկացած գործողություն (գործառնություն) կամ գործողությունների (գործառնությունների) համախումբ, որը կատարվում է անձնական տվյալների հետ՝ ավտոմատացման գործիքների կիրառմամբ կամ առանց նման գործիքների, այդ թվում՝ տվյալներ հավաքագրելը, արձանագրելը, ձայնագրելը, համակարգելը, կուտակելը, դասակարգելը, պահպանելը, ճշգրտելը (թարմացնելը, փոփոխելը), վերհանելը, արտաբերելը, օգտագործելը, բացահայտելը (տարածելը, այլ անձին հաղորդելը, տվյալներին հասանելիություն տրամադրելը), ապանձնավորելը, արգելափակելը, ջնջելը, ոչնչացնելը, անդրսահմանային փոխանցումը, ինչպես նաև ցանկացած այլ գործողություն, որն անձնական տվյալների հետ իրականացվում է գործող օրենսդրությանը համապատասխան:

12.3. Կետ 12.1-ում նշված Ապահովագրի (Շահառուի) համաձայնությունն ուժի մեջ է մնում Ապահովագրության պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում, ինչպես նաև պայմանագրի ժամկետն ավարտելուց կամ պայմանագրի շուրջ կողմերի վեճի վերաբերյալ դատական որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ևս 5 տարիների ընթացքում: Սույն համաձայնությունը կարող է հետ կանչվել Ապահովագրի (Շահառուի) կողմից՝ առնվազն 30 օրացուցային օր առաջ ուղարկելով համապատասխան գրավոր դիմում Ապահովագրողին:

12.4. Ապահովագրից (Շահառուից) իր անձնական տվյալների մշակման մասին համաձայնությունը ետ կանչելու, կամ անձնական տվյալներն ուղղելու կամ ոչնչացնելու (եթե անձնական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն, կամ հնացած են, կամ ձեռք են բերվել ապօրինի ճանապարհով, կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակների համար) պահանջ ստանալու դեպքում, Ապահովագրողը պարտավորվում է դադարեցնել այդ անձնական տվյալների մշակման գործողությունները, կամ ուղղել կամ ոչնչացնել անձնական տվյալները 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե բացակայում են Ապահովագրողի և Ապահովագրի (Շահառուի) միջև չկատարված պարտավորություններ և գործող պայմանագրային հարաբերություններ, այլապես՝ Ապահովագրողի և Ապահովագրի (Շահառուի) միջև պայմանագրային հարաբերություններն ենթակա են դադարեցման՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Անձնական տվյալների մշակման մասին համաձայնության հետ կանչման կամ անձնական տվյալների ոչնչացում պահանջելու դեպքում՝ Ապահովագրի

**ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

(Շահառուի) անձնական տվյալները դադարում են մշակվել Ապահովագրողի կողմից, սակայն դրանք պահպանվում են տեղեկատվական արխիվում և կարող են օգտագործվել միայն օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: Համաձայնության հետ կանչը հետադարձ ուժ չունի:

12.5. Սույն Կանոնների հիման վրա Ապահովագրական պայմանագիր կնքելով, Ապահովագիրը (Շահառուն) հավաստում է, որ տեղեկացված է՝ 12.1 կետում նշված իր համաձայնությունը ցանկացած պահին հետ կանչելու, իր անձնական տվյալները օգտագործող օպերատորների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, իր անձնական տվյալները ճշգրտում պահանջելու և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված իր այլ իրավունքների մասին: Ապահովագիրը (Շահառուն) նաև հաստատում է, որ Ապահովագրողն իրեն տրամադրել է վերջինիս անվան և հասցեի, անձնական տվյալների մշակման նպատակների, ժամկետների, իրավական հիմքերի, անձնական տվյալների նպատակային օգտատերերի մասին և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ տեղեկատվությունը:

ԲԱԺԻՆ 13. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ

13.1. Պայմանագրի գործողության ընթացքում առաջացող բոլոր վեճերը լուծվում են Կողմերի միջև անմիջական բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում, վեճերը լուծվում են դատական կարգով՝ օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան:

13.2. Վիճելի հարցերի լուծման ժամանակ Պայմանագրի դրույթները գերակա են Կանոնների դրույթներին նկատմամբ:

ԲԱԺԻՆ 14. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

14.1. Կանոնների հիման վրա կնքված Պայմանագրի կողմերից ոչ մեկն իրավունք չունի Կանոններով նախատեսված իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցել երրորդ Կողմի, առանց Պայմանագրի մյուս Կողմի գրավոր համաձայնության, բացառությամբ Ապահովագրողի կողմից վերաապահովագրական գործառնություններից:

14.2. Պայմանագրի կողմերը պատասխանատվություն են կրում իրենց կողմից հայտնված տվյալների ճշտության համար և պարտավորվում են տեղեկացնել միմյանց այդ տվյալներում կատարված յուրաքանչյուր փոփոխության մասին:

14.3. Կանոններով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պայմանագրի կողմերը պատասխանատվություն են կրում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

14.4. Բոլոր հայցերը և դիմումները, որոնք Պայմանագրի կողմերն ուղղում են իրար, պետք է իրականացվեն գրավոր ձևով:

14.5. Կանոններով չկարգավորված հարցերը կարգավորվում են օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

14.6. Կանոնների ռուսերեն և հայերեն լեզուներով ներկայացված տարբերակներում տարընկալումների դեպքում, առաջնությունը տրվում է Կանոնների հայերեն լեզվով գրված տարբերակին: